ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 104 - Ա
05 հունիսի 2014 թ.

<<ՍԵՎԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ>>, <<ՄԱՐՏՈՒՆՈՒ ԲԿ>>, <<ՃԱՄԲԱՐԱԿԻ ԱԿ>>, <<ԼՈՒՍԱԿՈՒՆՔԻ ԱԱՊԿ>>, <<ՁՈՐԱԳՅՈՒՂԻ ԲԱ>>, <<ԼՃԱՇԵՆԻ ԱԱՊԿ>>, <<ՎԵՐԻՆ ԳԵՏԱՇԵՆԻ ԲԱ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի թիվ 224-Ն որոշմամբ հաստատված ,,Հարյուր տոկոս՝ պետության սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների ընտրության /նշանակման/ ընդհանուր կարգի,, 3-րդ կետի դրույթներով՝

որոշում եմ՝

1. Ս/թ օգոստոսի 20-ին նշանակել և անցկացնել <<Սևան հիվանդանոց>>, օգոստոսի 21-ին <<Մարտունու ԲԿ>>, օգոստոսի 22-ին <<Ճամբարակի ԱԿ>>, օգոստոսի 23-ին <<Լուսակունքի ԱԱՊԿ>> և <<Ձորագյուղի ԲԱ>>, օգոստոսի 26-ին <<Լճաշենի ԱԱՊԿ>> և <<Վերին Գետաշենի ԲԱ>> փակ բաժնետիրական ընկերությունների տնօրենների թափուր պաշտոնների համար բաց մրցույթ:
2. Մարզպետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնին /բաժնի վարիչ՝ Ն. Մաթևոսյան/ սահմանված կարգով կազմակերպել մրցույթի նախապատրաստական աշխատանքները:
3. Որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Ա. Հակոբյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ